

տաղէտներէն բաղկացած մի մեծ ժողովում վերջնականապէս կազմուեց ծրագիրն, որ Մանթաշեանց ընդունեց եւ յանձնեց իր ընտրած հայ ճարտարագետին, որ անյապաղ շինութիւնն սկսի: 1910 Յունիսի 6ին էջմիածնում տեղի պիտի ունենար հանդուցեալ Հայրիկի մահարձանի բացումը: Այնպէս յարմար դատուեց, որ վեհարանի հիմնաբեկէքն այդ օրը կատարուի: Այդ օրը պատարագից յետոյ բացուեց Խրիմեանի արձանն, որի տապանագիրն, իր յաջորդը Իգմիրլեան կաթողիկոսն էր խմբագրել — «Նուագող վշտից Հայրեմեաց» տիտղոսը տալով Խրիմեան Հայրիկին: Ապա Մատթէոս կաթողիկոսը՝ Երեւանի ուսն նահանգապետի եւ ամէն կողմից այցելութեան եկած խումն բազմութեան ուղեկցութեամբ, Տաճարի բակից՝ «Տրդատայ դարաւայի» միջոցով դուրս ելաւ եւ ուղղուեց դէպի նոր վեհարանի շինութեան տեղն, որ ինչպէս վերեւ յիշեցի, էջմիածնի շրջանավայրից դուրս էր: Հիմնարկութեան օրհնութիւնը կատարելուց վերջը առաջին քարը դրեց Իգմիրլեան կաթողիկոս, ապա նահանգապետն, իբրեւ ուսանական կառավարութեան ներկայացուցիչը, բոլոր ներկայ եպիսկոպոսներն եւ յետոյ Մանթաշեանցի ներկայացուցիչը՝ Գէորգ Շահումեան: Հիմքի մէջ զետեղուեց մի պղնձեայ տախտակ, որ հետեւեալ մակագրութիւնն էր կրում.

«Յամի Տեառն 1910 եւ Հայոց ՌՅԾԹ. ի 6 ամսեանն Յունիսի, յաւուր հրաշարառ տօնի Հոգեգալստեան, ի թագաւորութեան Նիկօլա Բ. կայսեր Համայն Ռուսիոյ, ի փոխարքայութեան Կովկասու կոմս Իլարիոն Իվանովիչ Վորոնցով — Դաշկովի եւ ի հայրապետութեանն Տ. Տ. Մատթէոսի Բ. կաթողիկոսի Ամենայն Հայոց, հիմն արկաւ վեհարանին՝ ծախիւք եւ արդեամբք Մեծագործ Բարերարին՝ Աղեքսանդրի Յ. Մանթաշեանցի»:

Այնուհետեւ կաթողիկոսը լիաշուքին օրհնեց բարերարին, յիշելով եւ զովելով նրա բազմաթիւ բարեգործութիւնները: Արարողութիւնից անմիջապէս վերջը՝ կաթողիկոսը հետեւեալ հեռագիրն ուղղեց Մանթաշեանցին, որ այն միջոցին Պարիս էր.

«Այսօր հանդիսաւորապէս օրհնեցինք նոր վեհարանի հիմքը Նահանգապետի ներկայութեամբ: Օրհնում ենք նաեւ Ձեր թանկագին կեանքն եւ Ձեր զուակներին»:

Մանթաշեանց պատասխանել էր.

«Էջմիածին, Նորին Սրբութեան Կաթողիկոսին: Խորապէս զգածուած Ձեր հեռագրից, երկար եւ փառաւոր կեանք եմ մաղթում ի սրտէ Ձերդ վեհախառութեան, ի պայծառութիւն Հայաստանեայց սուրբ Եկեղեցոյ 7 Յունիս 1910 Պարիս»:

Մանթաշեանցի սովորութիւնն էր, որ երբ որ եւ է խոշոր նուիրատուութիւն էր անում, անմիջապէս այդ գումարն բանկի իր անձնական հաշուիցը հանում էր եւ դնում էր ամբողջապէս իր գանձապահի՝ կարգադրութեան տակ, որպէս զի այլեւս իրեն դիմելու հարկ չզգացուի, որովհետեւ ինք յաճախակի բացակայում էր Թիֆլիսից:

Վեհարանի շինութեան համար Մանթաշեանցի յատկացրած սկզբնական գումարը 250.000 ռուբլի էր, բայց ինչպէս միշտ լինում է, այդ չբաւականացաւ եւ հարկ եղաւ նոր բիւրաւորներ աւելացնել Մանթաշեանցի կտակում նշանակուած բարեգործական գումարից: Վեհարանը Մանթաշեանցի ճարտարապետի՝ Չորարեանցի հսկողութեան տակ վերջացաւ 1914 Մայիսին. բայց նա չծառայեց իր բուն նպատակին, կամ գոնէ դեռ չէ ծառայել: Շինութեան աւարտումից յետոյ, ահեղ պատերազմի ժամանակ, նա վերածուեց զինուորական հիւանդանոցի. իսկ հիմայ, դարձած է Խորհրդ. Հայաստանի դորանոցը...:

Մանթաշեանց միտք ունէր էջմիածին այցելել վեհարանի շինութեան աւարտումից յետոյ, բայց անողոք ճակատագիրն ուրիշ կերպ էր տնօրինել:

(Շարունակելիս:)

ՍԱՌՈՒՅԸՆ



\* Ես չեմ ճանաչում որեւէ անձ, որ իբրեւ գանձապահ աւելի վստահելի լինէր քան այս մարդը, Սարգիս Պոնդուկեանց, որ Մանթաշեանցի, մեծ քեանակալն էր եւ գրեթէ իր ամբողջ կեանքը անցրել էր Մանթաշեանցի գրամատակի պաշտօնի մէջ:

Stern Glaube und Stern Deutung. Die Geschichte und das Wesen der Astrologie. Unter Mitwirkung von Karl Bezold, dargestellt von Franz Boll. Vierte Auflage. Nach des Verfassers Tod herausgegeben von W. Gundel. Mit 48 Abbildungen im Text und auf 20 Tafeln sowie einer Sternkarte. XIV + 230 + XXIV S. Leipzig und Berlin (B. G. Teubner), 1931. RM. 13.60.

Հայ մատենագրութիւնը հարուստ է քաղեցութեան եւ աստղագիտութեան նուիրուած գրականութեամբ: Երբ ժողովրդագէտն այսպիսի գրութիւններու ուսումնասիրութեան միջամուկս ըլլայ, զարմանազան հաւատարմութեան, անուաններու եւ անձերու առջեւ պիտի գտնէ ինք զինքը, որոնց մասին սակայն ի զուր լուսաբանութիւն մը պիտի սպասէ այդ գրութիւններէն: Եւ այս անոր համար, որ այդ աղթարական եւ աստղագիտական գործերը յաճախ թարգմանութիւններ կամ եկամուտ տարրներ են:

Արդ այս տարտամ կացութենէն զիտնականը դուրս կորզելու պաշտօնն ունի այս գեղեցիկ գրութիւնը, ուր հեղինակն աստղագիտութեան պատմութիւնը կու տայ մեղի, վարպետօրէն մատնանշելով՝ թէ ինչ ընթացք կատարած է ան՝ հին եւ միջին դարերէն մինչեւ այսօր: Մեր քաղեցական մատենագրութիւնը քննելու ժամանակ՝ անհրաժեշտ աղբիւր պիտի ծառայէ պատկառելի երկս նման մութ կէտեր լուսաբանելու:

Հայաստան՝ աստղագիտութեան որրանին՝ Բարեւոնի կողքին ըլլալուն, շատ բան անմիջական հարադատութեամբ առած է անկից եւ մինչեւ այսօր դեռ կը պահէ սին հաւատքին մէջ: Այս տեսակէտով ալ մասնաւոր ուշադրութեան արժանի է Boll-Bezoldի գրութիւնը: Հոն հեղինակն այլ եւ այլ հին եւ նոր աղբիւրու աստղագիտութեան վրայ խօսք ըրած է՝ առանց հայկականը նկատողութեան առնելու: Չենք զարմանար. որովհետեւ հայ քաղեցութիւնը նոյն իսկ ազգային հողի վրայ չէ ուսումնասիրուած, թէեւ առատ առաղձ կայ: Կը յուսանք թէ ապագային առիթը պիտի ունենանք այս անձակ գեանին մերձենալու: Այդ առթիւ Boll-Bezoldի գրութիւնը մասնաւոր անհրաժեշտութիւն պիտի ստանայ:

Հեղինակին անչափ հմտութիւնը, պայծառ արտայայտութիւնը, կենդանի եւ գրաւիչ ոճը

կը հրապուրեն ընթերցողը եւ նիւթը նաեւ ոչ մասնագէտներուն հետաքրքրական կ'ընեն:

Այս առթիւ չենք կրնար սակայն կարծեկից ըլլալ իր ինչ ինչ ազատ դատաստաններուն, որոնք դարերէ ի վեր ընտանի եղած համոզումներու անհաշտ կ'երեւան:

Հ. Ա. ԳԱՐԱՄԱՆԼԵԱՆ

Mandelstam André N., Das armenische Problem im Lichte des Völker- und Menschenrechtes. Anhang: Die deutsch-russischen Beziehungen während der armenischen Reformation. Berlin, Verlag von Georg Stilke, 1931, 8°, S. 149. [Aus dem Institut für internationales Recht an der Universität Kiel, I. Reihe, Heft 15.] Գինը՝ M. 7.50.

Միջազգային իրաւունքի հմուտ եւ արեւելեան հարցին ծանօթ եւ քաղաքագէտ հեղինակը՝ յետասահայեաց ակնարկ մը կը նետէ Հայոց դարաւոր մարտիրոսագրութեանը վրայ չորս գլխաւոր բաժանումներով:

Ա. Մինչեւ ընդհանուր պատերազմը միջազգային պաշտպանութիւնը: — Բացարձակ առարկայօրէն կը վերլուծէ թէ ինչ նկարագիր ունէին եւրոպական պետութիւններուն օտմ. Կայսրութեան մօտ ըրած միջամտութիւնները: Նախ միակ պատճառը կը համարի Թուրքերու եւ Քուրտերու շարունակ ճնշումները (էջ 31): Երկրորդ կը շեշտէ թէ մինչեւ 1895 բոլոր մեծ պետութիւնները հաւաքաբար կը միջամտէին, իսկ անկից ետքը Ռուսաստան առանձին մնաց, մինչեւ 1914, երբ հաւաքաբար եղած միջամտութիւնը պարզապէս կերպական մնաց: Երրորդ կ'ապացուցանէ թէ՛ թէ՛ համաձայնական եւ թէ՛ զինակից պետութիւնները ինչ միջամտութիւն որ ըրած են՝ պարզապէս մարդասիրական տեսակէտով ըրած են, եւ չորրորդ թէ՛ մասնաւորաբար Ռուսաստան՝ առանց շահագիտական ձգտումի 1914 Փետր. 8ին միջազգային հակազուրի տակ Հայոց ինքնավարութեան դաշնագիրը գլուխ հանեց: Այս մասն ակնբերել կը ջրէ Ըամէթ փաշայի այն ճառը զոր խօսեցաւ Լոզանի մէջ, որով հաւաստել կ'ուզէր, թէ փոքրամասնութեանց պաշտպանութիւնը, պարզապէս եւր. պետութեանց քմահաճ միջամտութեան պատուակ ըլլար (էջ 8):

Բ. Ընդհանուր Պատերազմի միջոցին Գերմանիոյ եւ համաձայնական պետութեանց Հայոց հանդէպ բռնած դիրքը: — Այս մասը կը պարզէ գլխաւորաբար Գերմանիոյ եւ զինակից պետութիւններու հայկական տարազրուութեանց եւ ջարդերու կերպական մասնակցութիւնը. միւս կողմանէ համաձայնականներու Հայոց՝ ազատագրութեան համար բրած հանդիսական խոստումները: Պարզ եզրակացութիւնն այն է թէ երիտասարդ թուրքերը՝ Համիտի ծրագիրն զործադրեցին (էջ 40) Գերմանիոյ մասնակցութեամբն, եւ համաձայնականները խոստումներ չուսուցեցին՝ առանց զանոնք կատարելու:

Գ. Պատերազմէ ետքը՝ մեծ պետութիւններու դիրքը հայկական հարցին հանդէպ: — Մինչեւ 1920 Դեկտ. Ազգաց Ժողովքին առաջին նիստը, հայկական հարցը զանազան փուլերէ անցաւ: Բաթումի դաշինքը, Մուսրուսի զինազաղարը, Թուրք ազգ. Մեծ Ժողովքը, խնամակալութեան խնդիրը, Սեյդի դաշնագիրը, Փրանսայի եւ Իտալիոյ Թուրքերու մերձեցումը, Ազգերու Ժողովքի ամէն միջամտութիւն մերժելը, Գեմալականներու եւ Համաձայնականներու հաշտութիւնը, էնկելի դաշնագրութիւնը, Պոնտոսի պարպումը, Պարիսի բանակցութիւնները, եւ վերջապէս Լոզանի դաշնագրութիւնը — այս ամէն կարեւոր խնդիրները մի առ մի նկատողութեան առնուած են: Հայոց համար նոյն իսկ ամենամանապատ որոշումները, պարզապէս զանոնք սին յուսով որորելու եւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհէն լքուելու ախուր իրողութիւնը՝ հեղինակը այն եզրակացութեան յանդէպ կ'ատաճորդեն — որ հրատարակութեան Դ. մասը կը կազմէ — թէ պետութիւնները Հայերն լքելով բռնաբարած են մարդկային եւ համազգային իրաւունքը, եւ այն առանց ստիպողական հարկի մէջ գտնուելու: Վերջարանին մէջ Ազգերու Ժողովին անսարքութեանը վրայ կը ծանրանայ: Այս կէտերու վրայ առանձին կերպով ծանրանալու հարկ չկայ, որովհետեւ նախապաշարուած զերծ ամէն անհատ, հարկ է որ ընդունի անոնց յայտանդիմանութիւնը:

Վերջարանին մէջ բաղձանք կը յայտնէ հայասէր իրաւաբանը, որ բոլոր տէրութիւններն այս դժբախտ Ժողովրդեան ազատագրութեանը սատարէին, չեղանքով այն կէտը,

որ այսպիսի ուրախալիք իրողութիւն մը միայն՝ ազգերու եւ մարդկային իրաւունքին արեգակնային ծագման փառայեղ նախակարգական կրնայ ըլլալ:

Իմ համեստ կարծիքովս ազգերու՝ առանձին կամ հաւաքաբար Հայուն ազատագրութեանը համար գործակցելն այնչափ անհնարին է, որչափ անհնարին որ պետութիւններու նիւթապաշտ քաղաքականութիւնը մարդկային եւ համազգային իրաւունք մը յարգել տալու համար զոհողութիւն մ'ընէ: Հայն իր երջանկութիւնն եւ ազատագրութիւնն այն ատեն միայն պիտի ապահովէ՝ երբ ամէն անհատ իր երջանկութիւնն եւ ազատագրութիւնը անձնապէս կերտելու ջանքն ի դործ կը դնէ հայրենիքի սիրով:

Յաւելուած մը էջ 93—149 ուստական եւ դերմանական բանակցութիւններու շարքն կը թուէ եւ կը շեշտէ այն տեսակէտը, որ Ռուսաստան անհաճազէտ հողով հայկական հարցով զբաղած է:

Հայ մարտիրոսագրութեան ամբողջացումի տեսակէտով հեղինակն, որ այնչափ ծանօթ է Հայուն ամէն տառապանքին, առանձին կերպով յիշելու էր Սասունի կոտորածն եւ Փրանսայիներու Կիլիկիոյ պարպումէն ետքը Հաճընի եւ Մարաշի ինչպէս նաեւ ընդհանուր աբսորքէն ազատեալներու աղէտալի վախճանը: Պէտք չէր վրիպել Հեղինակին ուշագրութեանէն նաեւ այսօր Թուրքիոյ մէջ ապրող հայերուն վիճակը:

Պիտի բաղձայինք, որ ամէն Հայ իր ծանօթ օտար շրջանակներու ուշագրութեանը յանձնէր այս հրատարակութիւնս, ազգասիրական պարտականութիւն մը կատարած ըլլալու ինքնագիտակցութեամբ:

Հ. ԱՐԹԱՆԵՍ Վ. ԲՈՒՆԿՈՒՅ

ՀԱՄԲՈՒՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆ, Յուլիանոսի Վան-Վաս-պուրականի. Ա. եւ Բ հատոր, 8, էջ 2 + 502 + 542. Ազգերանդրիս 1929: Գինն՝ 120 եր. դճկ.:

Վերջին դարու հայ պատմութիւնն է, զոր Հ. Երամեան մեզմէ յաւելտ բաժնուելէ յետո՛ւ՝ այս հսկայածեւ յուշարձանին վրայ արձանագրած է: Հեղինակի տաք սիրտը կը բարակէ իւրաքանչիւր էջի մէջ, որով երկու

ստուար հատորներուն ընթերցումը շատ հրապուրիչ կը դառնայ:

Ուսուցչական կոչումը Հ. Երամեանն կեանքի բաղձապիտի հոսանքներու մէջ մղած է. եւ իբր ուսուցիչ՝ հեղինակը շատ յարաբերութիւններ մշակած է յատկապէս Վան-Վասպուրականի յետին յիսնամեակի ազգային եւ օտար անձնաւորութիւններու հետ: Արդ մինչ մէկ կողմանէ Հ. Երամեան «Յուշարձան»ին մէջ իր ինքնակենսագրութիւնը կ'ընէ, միաժամանակ կ'ողբկոչէ վերջին դարու հայկական դէպքերն ու անձնաւորութիւնները:

Աշխատասէր եւ անձնազոհ մարդու երկն է այն, որ իսկական յուշարձանը պիտի մնայ մեր նորագոյն պատմութեան երեկուան անցքերուն: Թէեւ շատ ուրախալի եւ սրտապնդիչ բան չունի մեր նորագոյն պատմութիւնը, բայց ինքնաճանաչութեան համար պէտք է ուսումնասիրել զայն: Եւ Երամեան մեծապէս նպաստած է հայ արդի պատմութեան: Ով որ մեր եկեղեցական, կուսակցական ու տարազրական պատմութիւնը խուզարկել կ'ողբէ, թող դիմէ Հ. Երամեանի, որ թէեւ մարմնաւոր լոյսէ զրկուած է, բայց իր մտքին լոյսով՝ շողաւոր ճամբաներէ պիտի առաջնորդէ զայն:

Անտեսելով ինչ ինչ միակողմանի տեսութիւններ՝ «Յուշարձան»ը անհրաժեշտութիւն մըն է մեր նորագոյն պատմութեամբ զբաղողներուն: Իսկ ազգային կեանքով հետաքրքրուողին համար՝ հոգեպարար ընթերցումի գիրք:

Մասնաւոր շնորհակալութիւն պարտական ենք կոկին Յանձնաժողովներուն եւ Վասպուրականցիներու Միութեան, որոնք այս գեղեցիկ գործը հրապարակ հանելու մեծապէս օժանդակած են:

Հ. Ա. ԳԱՐԱՄԱՆԵԱՆ

**ԺԱՂԵՓՈՒՆՋ ԺԱՄԵՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

\* Այսինքն Թօզաքեան: Ամերիկեան եւ եւրոպական ինչ ինչ թերթեր երկար սիւներ նուիրեցին հայ մեծատաղանդ երգիչին: Մասնաւորապէս Բուզապէտի մէջ վերջերս իր երգած կտորները զարմացուցին հասկցող

արուեստագէտներն ու նոյն իսկ ունկնդիր բաղձութիւնը: Pagliacioti եւ Cavalleria rusticanaի մէջ (իբր Canio եւ Turridu) ա'յնպէս մոգած է իր ընտիր ունկնդիրները, որ ծափահարութիւններու տեղատարափին տակ մինչեւ 35 անգամ բեմ կանչուած ու յայտագրէն դուրս ալ կտորներ երգած է: Նման ուխտանաչներով ունկնդրուեցաւ նաեւ Վիեննայի Opernhausի մէջ: Բաղձութիւնն ա'յնչափ խանդավառուած էր, որ ներկայացումէն յետոյ՝ մեկնումի պահուն՝ ուսամբարձ տարած է զայն: Վիեննացիները հայ երգիչին մէջ «Երկրորդ Կարուզոյ» մը կը տեսնեն: Տեղական ամենամեծ թերթերէն մին կը գրէր. «Երիտասարդ հայն իսկական երգիչ մըն է, առաջին կարգի գեղարուեստագէտ, բանիմաց ու երանդալից Tenor մը: Իր խանդն ու գեղեցիկը հմայքը ձգիչ են: Սքանչելի առողանութիւն մը ունի. Իտալերէն բնագրին իւրաքանչիւր խօսքը ոսկւոյ պէս կը հոսի անոր շրթունքներէն: «Կոնտելու Երգն» այնպիսի աշխուժով եւ պայծառ բարձրութեամբ հնչեցուց, որ որոտնդոտ ծափերու մէջ կորսուեցան երգին յետին հնչիւնները»: Հոկտեմբեր 1ին՝ մայրաքաղաքիս Համբարկ Տան Մեծ Սրահին մէջ դարձեալ երեւցաւ իմին վրայ: Թօզաքեան մեծ վարպետներու այլ եւ այլ կտորներու հետ երգեց նաեւ Կոմիտաս վարդապետի «Կոունկ»ը եւ «Հայաստան»: Թերեւս առաջին անգամն էր՝ որ Վիեննայի այդ նշանաւոր սրահը հայ գուսանին ու հայ երգին արձագանգները կը հնչեցնէր: «Կոունկ»ը բուն ծափերով կրկնուեցաւ: Եւ մինչ սրահին լոյսերը կը մարէին նշանակելու համար՝ թէ վերջացած է երգահանդէսը, բաղձութիւնը բեմին առջեւ կը խոնէր եւ որոտնդոտ ծափերով՝ երգիչը դարձեալ բեմ կը հրաւիրէր: Թօզաքեան այս անգամ «Հայաստան»ը գեղեցիկ եւ բաղձութիւնը ծափերով թողուց սրահը:

\* Ուսուցչապետ Մակիէր Բուլգարիոյ մէջ: Սեպտեմբերի սկիզբը յայտնի հայագէտը՝ Բուլգարիա գացած է իր հայագիտական ծառային յազուրդ տալու նպատակով: Ուսուցչապետը հետեւեալ խօսքերով կը պարզէ իր նպատակը. «Պուլխարիա եկած եմ տեղւոյս գրագարաններուն եւ վանքերուն մէջ պահուած հին հայկական ձեռագիրներն ու յիշատակարաններն ուսումնասիրելու համար»: Բուլգարահայ գաղութը՝ հիներէն մին է՝ եւ